ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

«17» 10 2025 թ.
No 1/18-4/63464-2025

«ԴԱՐՈՆՆ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՏՆՕՐԵՆ՝ ՍՈՖՅԱ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ
Ք. ԵՐԵՎԱՆ, ԼԵՆԻՆԳՐԱԴՅԱՆ
ՓՈՂՈՑ 31/1, ԲՆԱԿԱՐԱՆ 42
ԷԼ. ՀԱՍՑԵ՝ daronn-arm@mail.ru

Հարգելի տիկին Մանուկյան

Հայտնում եմ Ձեզ, որ 2025 թվականի հուլիսի 8-ին Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Գնորդ) և «ԴԱՐՈՆՆ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Վաճառող) միջև կնքվել է ՀՀ ՊԵԿ-ԷԱՃԱՊՁԲ-2025/5-1 ծածկագրով պետության կարիքների համար ապրանքի մատակարարման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր), որի 1-ին և 2-րդ չափաբաժինների համաձայն Վաճառողը պարտավորվել էր մինչև 2025 թվականի օգոստոսի 3-ը ներառյալ մատակարարել ջրատաքացուցիչներ և պտտվող-հոկող գործիքներ, սակայն դրանք մինչ օրս չի մատակարարել: Միևնույն ժամանակ հայտնում եմ, որ Գնորդը, 2025 թվականի սեպտեմբերի 25-ին թիվ ԿՊ/1/18-1/5153-2025 գրությամբ, Վաճառողին տվել է ողջամիտ ժամկետ՝ 5 աշխատանքային օր և տեղեկացրել, որ պայմանագրով ստանձնած պարտավորությունները չկատարելու դեպքում ստիպված կլինի միակողմանի մասնակի լուծել Վաճառողի հետ կնքված պայմանագիրը (1-ին և 2-րդ չափաբաժինների մասով)՝ կիրառելով օրենսդրությամբ սահմանված բոլոր դրույթները:

Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ մինչ օրս Վաճառողը չի մատակարարել Պայմանագրի 1-ին և 2-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքատեսակները և առաջնորդվելով Պայմանագրի 2.1.7-րդ կետով՝ Գնորդը ստիպված է Պայմանագիրը միակողմանի մասնակի լուծել:

Միաժամանակ հայտնում ենք, որ Պայմանագրի Հավելված 1-ով նշված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման համար Պայմանագրի 6.2 և 6.3 կետերի

համաձայն Վաճառողից պետք է գանձվի տույժ և տուգանք: Տույժը կազմում է 15033.5 ՀՀ դրամ (601338x0.05%=300.67x50), տուգանքը կազմում է 3006.69 ՀՀ դրամ (601338x0.5%):

Վաճառողը պետք է վճարի նաև 95700 ՀՀ դրամ որակավորման ապահովման գումար և 63800 ՀՀ դրամ՝ պայմանագրի ապահովման գումար:

Միաժամանակ հայտնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետով սահմանված դրույթները չպահպանելու դեպքում Պատվիրատուն կնախաձեռնի «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված ընթացակարգը:

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ ՍՍ Sign ԷԴԳԱՐ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կատարող՝ ԳԿՎԱՎ գնումների համակարգման բաժին
Սպարտակ Հարությունյան
Հեռ.060-844-702